ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» հոկտեմբերի 2013թ. N 401

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հարապետության օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի <<բ>> ենթակետով, Հայաստանի Հարապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի N 624 որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հարապետության Արմավիրի մարզպետի 09.07.2013թ. N 47 և 22.08.2013թ. N 68 կարգադրություններով ստեղծված հանձնաժողովների կողմից Հայաստանի Հարապետության Արմավիրի մարզի Եղեգնուտ, Զարթոնք, Շենավան, Ջրաշեն, Քարակերտ, Լեռնագոգ, Երվանդաշատ, Շենիկ, Հուշակերտ համայնքներում քաղաքաշինության բնագավառում անցկացված պլանային ստուգումների արդյունքները.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հարապետության Արմավիրի մարզի Եղեգնուտ /արձանագրություն N 3/, Զարթոնք /արձանագրություն N 4/, Շենավան /արձանագրություն N 7/, Ջրաշեն /արձանագրություն N 12/, Քարակերտ /արձանագրություն N 26/, Լեռնագոգ /արձանագրություն N 27/, Երվանդաշատ /արձանագրություն N 28/, Շենիկ /արձանագրություն N 29/, Հուշակերտ /արձանագրություն N 30/ գյուղական համայնքներում քաղաքաշինության բնագավառում անցկացված պլանային ստուգումների արդյունքները ընդունել՝ ի գիտություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ